ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/31, 16.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզ Աբովյանի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02»

Գնման առարկան՝ սննդամթերքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 07.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ Երևան, Մելիք-Ադամյան 1 /ՀՀ ֆինանսների նախարարություն/

Բողոք բերող ընկերություն՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ

Հասցե՝ Լ.ՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փ., շենք14. բն.21

e-mail: ms.foton2014@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարան

Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1

Գնման ընթացակարգի՝

Ծածկագիր՝ ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգ

Գնման առարկա՝ **սննդամթերքի ձեռքբերում**

ԲՈՂՈՔ

Աբովյան համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքների ձեռքբերման համար 23.02.2022 թվականին հրապարակվել է ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ:

Վերը նշված աճուրդին մասնակցել է երկու կազմակերպություն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն:

ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2022 թվականի մարտի 7-ին ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության մեջ նշվել է, որ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտում՝ Հավելված 1.2 ում առկա են թերություններ, ինչի հետևանքով նույն նիստով որոշել է հնարավորություն տալ կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված թերությունները, իսկ այնուհետև արձանագրել է, որ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն շտկել է Հավելված 1.2 ում արձանագրված անհամապատասխանությունները: Դրանից հետո նույն հանձնաժողովը նույն նիստում որոշում է կայացնում և հաղթող է ճանաչում «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ու սահմանում է անգործության ժամկետ 10 օրացուցային օրով: Այդ մասին նույն հանձնաժողովը հրապարակում է հայտարարություն www.gnumner.am կայքում, այսինքն նշված անգործության ժամկետի սկիզբ է համարվում 09.03.2022 թվականը, իսկ վերջը՝ 19.03.2022 թվականը:

Գտնում ենք, որ ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել ՀՀ կառավարության 04.05.2017թ-ին թիվ 526-Ն որոշումով ընդունված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43 կետի 1 ենթակետը, քանի որ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: **Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:**

Վերոգրյալից ելնելով, գտնում ենք, որ նախ մրցույթի հանձնաժողովի կողմից արձանագրության մեջ **մանրամասն** չեն նկարագրվել այն անհամապատասխանությունները, որոնք առկա են եղել «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի հայտով ներկայցվախ Հավելված 1.2 ում: Երկրորդ, նույն արձանագրության մեջ կրկին չեն նկարագրվել ինչ է շտկել մասնակիցը, որից հետո նրա հայտը գնահատվել է բավարար և նա ճանաչվել է ընտրված մասնակից: Այսինքն պարզ չէ ինչն է եղել խախտումը, որ պարզ դառնա ինչ է շտկել «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն: Այստեղ նաև կասկած է հարուցում, այդ ոնց է եղել, որ այդքան արագ է կազմակերպությունը շտկել թերությունը: Հարց է առաջանում, արդյոք պատվիրատուն՝ eauction@armeps.am կայքի միջոցով է ծանուցել մասնակցին, երբ է ծանուցել, կազմակերպությունը վերը նշված համակարգի միջոցով է շտկել թերությունը թե այլ տարբերակով, և կարևորը վերջապես ինչն է եղել թերությունը և արդյոք այն իրականում շտկվել է թե ոչ: Պատվիրատուի այս ախխտումները նաև հանգեցնում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվաշների խախտմանը, այսինքն հավասար, մրցակցային պայմաններ չեն ապահովել բոլոր մասնակիցների համար, չեն գործել թափանցիկ և հրապարակային և այլն:

<u>Վերոգրյալով պայմանավորված՝</u> Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

Պարտավորեցնել ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել /վերացնել/ ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 7-ին ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձին նաև միջնորդում ենք հարցում ներկայացնել eauction@armeps.am համակարգը սպասարկող համապատասխան իրավասու անձին պարզելու համար, արդյոք վերը նշված ընթացակարգի շրջանակներում «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել թե ոչ և երբ է ուղարկվել, իսկ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն շտկումները կատարել է համակարգի միջոցով թե ոչ:

Կից ներկայացվում է.

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը:

2. Ընկերության տնօրենի անձը հաստատող փաստաթղթի և պետռեգիստրի վկայականի պատճենները:

3. ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի 2022 թվականի մարտի 7-ին ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության պատճենը:

ՖՈՏՈՆ ՍՊԸ տնօրեն՝ ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ